



# ԳԻՏՈՒԹԻՒՆ

Բ. ՏԱՐԻ

ՄԻՇԵԼ ԶԷՅԹՈՒՆԼԵԱՆ

# ԳԻՏՈՒԹԻՒՆ

Բ. ՏԱՐԻ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Copyright © HAMASKAÏNE  
All rights reserved



ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ

ՄԻԱՅԵԱԼ ԶԵՌՆԱՐԿ  
ԼԻՒԱՆԱՆԻ ԹԵՄԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳԻ  
ԵՒ  
ՀԱՄԱԶԳՎՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹՎՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.— Նիւթերու եւ մարմիններու երեւ Վիճակները ...	7
2.— Զուր, շոգի եւ ամպ .....	19
3.— Մագնիս .....	28
4.— Շարժում, ուժ եւ աշխատանք .....	35
5.— Բոյսի մը գլխաւոր մասերը .....	45
6.— Բոյսին ծլումը եւ աճումը .....	48
7.— Աստղեր, լուսին, երկիր .....	60
8.— Մեր մարմինը .....	80
9.— Անասուններ — .....	88
10.— Զափելու գործիքներ .....	102

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Բնական երեւոյթ է փոքրիկներուն մօտ խուզարկելու միտք եւ հետաքրքրութիւն ունենալը իրենց անմիջական շրջապատին հանդէպ: Այս երեւոյթին գոհացում տալու, ինչպէս նաեւ յղկելու համար անոնց նաշակը, պէտք է զարգացնել զանոնք դիտելու կարողութիւնը եւ ուղղել անոնց միտքը, որպէսզի ընեն նիշդ վերլուծումներ եւ հասնին նիշդ արդիւնքներու:

Այս նպատակը իրագործելու համար անհրաժեշտ է ունենալ ուսուցման անհրաժեշտ միջոցները, որոնց առաջինը դասագիրքն է, պայմանաւ որ դասագիրքերը պատրաստուած ըլլան մանկավարժական աշխատանքին եւ գիտութեան ծրագրին ամբողջական նպատակներուն գոհացում տալու ձգտումով:

Մեկնելով այս մտահոգութենէն՝ այս դասագիրքի պատրաստութեան առթիւ ամէն նիգ ի գործ դրուած է, որպէսզի պարզ ու հասկնալի ըլլալու կողմին՝ ան ըլլայ նաեւ հաճելի, անոր նիւթերը աշակերտին հրամցուին գիտական ու գործնական պարզաբանուած մօտեցումով եւ օժտուած ըլլան նոր, ինքնատիպ ու նոյս պատկերազարդումով:

Մանկավարժական վերոյիշեալ նպատակները իրագործելու համար յենած եմ փորձառութեանս, ինչպէս նաեւ այն գաղափարին, զոր վաստակաւոր ուսուցիչ պրն. Հրաչ Տասնապետեան յայտնած է իր դասագիրքերու շարքին յառաջաբանին մէջ, — «Ձեռք հաւատար տնային աշխատանքի մը հնարաւորութեան եւ անհրաժեշտութեան՝ 8էն 10 տարեկան տղոց համար, երբ այնքա՛ն բնական ու հասկնալի է խաղին պահանջը: Հետագային, նախակրթարաններու վերջին դասարաններուն մէջ, կարելի է աւելի խստապահանջ ըլլալ՝ տնային պատրաստութեան նկատմամբ»:



Այս իրականութենէն ու համոզումէն մեկնելով՝ նիւթին ուսուցման համար նկատի առնուած են.

— դասին ներկայացումը՝ հարցումներով, որոնք կը համապատասխանեն մտային կարողութեան.

— տրամաբանութեան զարգացումը, որ կ'իրացուի բնականաբար և փորձերով:

Այս հատորին տասը դասերը կը ներկայացնեն մանուկին ապրած նիւթական աշխարհէն ու իր առօրեայ կեանքին հետ կապ ունեցող կարգ մը գիտական իրողութիւններ, որոնք կը պարզուին հիմնուելով գիտական մտապատկերներու եւ գաղափարներու վրայ եւ որոնք կը համապատասխանեն իր տարիքին ու մտային կարողութեան: Մանուկը կը ծանօթանայ քայլ առ քայլ իր շրջապատին: Կը ներկայացուին բազմաթիւ բնական բներէնայիններ, որոնք կը բացատրուին խուզարկութիւններու ու փորձերու կատարումով:

Այս հատորին հրատարակութեան առիթով շնորհակալական խօսք կ'ուղղեն.

ա.— Պրն. Հրաչ Տասնապետեանին, որուն դասագիրքերը տասնամեակներ շարունակ իբրեւ ուղեցոյց եւ դասագիրք ծառայեցին մեր ուսուցիչներուն եւ աշակերտներուն. անոնցմէ օգտուեցայ ինքս ալ այս շարքի պատրաստութեան համար (կարգ մը գլուխներ մօտաւոր վերարտադրութիւններ են, ինչպէս նաեւ կարգ մը նկարներ):

բ.— Օրիորդ Վարդուհի Անդոյեանին, որուն հետ մշակեցի այս հատորին նիւթերու շարքը:

գ.— Պրն. Երուանդ Մոնոփարեանին, որուն աշխատանքով այս հատորը իր նախնական ձեւաւորումէն ու պատրաստութենէն վերածուեցաւ ներկայի իր ամբողջական ու ներկայանալի գրքի վիճակին:

դ.— Ազգային Ուսումնական Խորհուրդին եւ Համագային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Կեդրոնական Վարչութեան, որոնք ազնիւ գաղափարը յղացած են հրատարակելու գիտութեան հայերէն դասագիրքերու այս շարքը:

Մ. Զ.